

կազմերով, բայց ասոնց հետ կայ քիչ մ'ալ անհայտիկ քրտոստ, ջրային շոգի, և աւելի նուազ մասեր ուրիշ կազմերու՝ որ բուսա- յին և կենդանային մարմնոց լուծմանէն կը ծագին) :

268 Ի՞նչ տարբերութիւն կայ քիմիական բաղադրարեան և մեքենական խառնուրդի մէջ : — Առջինին մէջ միացեալ մարմնոց յատկութիւնները կը փոխուին, մէկալին մէջ անփոփոխ կը մնան :

(Որինակի համար. եթէ զանազան տեսակ աւազներ չըլի մը մէջ դրած շարժես, կը խառնուի մեքենայէս. իսկ չմարած կրի վրայ թափուած ջուրը՝ քիմիական բաղա- դրուրին մը կը դառնայ. անանկ որ պարզ մեքենական միջոցով առաջին խառնուրդը դարձեալ կրնաս զատել, բայց կրրին և ջրին խառնուրդը ալ չի զատուիր. տարու- թիւնը զանոնք կը յեղափոխէ. քիմիական ներգործիչք միայն կըրնան զանոնք նորէն զատել) :

Կը շարունակուի :

ՀԵՏԱՒՐՔՐԱԿԱՆՔ

ՆԻՆԱ ՄԱՐԱԶԱԽՑԸ

— Ամուս 14ին Փաղղիոյ հեռագիրք նոր կո- ռուստ մը գուժեցին իրենց զինուորական ցուցա- կին մէջ. Նիէլ Մարաջախար իր մահկանացու կեանքը կիքեց ՚ի Բարիզ, որուն կենաց ընթաց- քին յառաջագիմուժիւնը առ ժամս համառօտ մը կը նշանակէր :

— Մնեալ էր ՚ի Միւրէ 1802ին հոկտեմբերի 4ին : 1821ին Բաղմարուեստից դպրոցը մտաւ և 1823ին Մէջի Յարմարութեան դպրոցը :

— 1828ին զինուորական ճարտարապետու- թեան տեղակալ ըլլալով և հրամանատար ՚ի 1831ին, յաջորդ տարին նաւեց գէպ Ալճերի, ուր և Կոստանդինայի առմանը մէջ իր ցցուցած կարճութեան և ճարտարութեանը պատճառաւ, պատերազմի պաշտօնէին խնդակցութիւնը ընդու- նելու արժանի եղաւ և միանգամայն գնդապետի աստիճան :

— 1842ին տեղակալ հազարապետ անուա- նուելով, և 1846ին հազարապետ, 1849ին Հռով- մայ արշաւանաց ժամանակ ինքն ալ զրկուեցաւ իբր զլուս զինուորական ճարտարապետութեան

սպայտիւտին. և այս պաշտօնից գործադրու- թեամբն ըրած ծառայութիւններն այն աստիճանի փառաւոր ելք ունեցան, որ երկու ամիս ետքը բարձրացաւ ՚ի զօրագլխութիւն խմբի : Այլ և Հռովմ քաղաքին բանալիները Սրբազան Քահա- նայապետին տանելու գործը իրեն յանձնուեցաւ :

— Փաղղիա դառնալով պատերազմական ճար- տարապետութեան վարչութիւնը իրեն յանձ- նուեցաւ. և մի և նոյն ժամանակ պատերազմա- կան ճարտարապետութեան և պատնըչից Բարձ- րագոյն ժողովոց մէջ մտաւ, և անուանեցաւ խոր հըրդական տերութեան արտաքոյ կարգի :

— 1853ին Ապրիլի 30ին բարձրացաւ ՚ի զօրա- վարութիւն խմբի :

— Երբոր Ռուսիոյ դէմ պատերազմ հրատա- րակեցաւ, ինքն ալ գործակից եղաւ Պալտիկ ծռ- վուն կողմէն արշաւող բանակին, հրամանատար ըլլալով ճարտարապետական Գնդին ՚ի պաշա- րուսն Պոմարսուստի. որուն առմանը մէջ ընտիր հանդիսանալով յայտնի փայլեցան իր զինուորա- կան ոգւոյն յատկութիւնները :

— 1854ին Յունուար ամսուն մէջ, կայսրը իրեն պատերազմի օգնական անուանեց զինքը, և զրկեց Խրիմ, որ բանակին ճգրիտ վեճակին տե- ղեկացնէ զինքը :

— Երեք ամիս ետքը զլուս ընտրուեցաւ Արևե- լեան բանակին զինուորական ճարտարապետու- թեան, որով առաջնորդեց Սեւաստաբոլի բախ- ման աշխատութեանց :

— Իսկ Մալաքոֆի յարձակմամբը (1855ին սեպտեմբերի 18ին) պատուեցաւ լէգէոնի մե- ծախսչ նշանով :

— 1855ին սինկղիսոս անուանեցաւ :

— 1858ին Կայսրը իրեն յանձնեց խնդրել վա- ւերաբարձիկտոր Էմմանուէլ թագաւորէնց հարս- նութիւն իշխանուհւոյն Կլոգիտեայ ընդ իշխա- նին Նաբոլէոնի :

— Իսկ այն փառացի մասն որ ունեցաւ իբրև հրամանատար բանակին չորրորդ գնդին Իտալիոյ պատերազմին ժամանակ և մասնաւորապէս Սոլ- Ֆերինոյի յաղթութեանը մէջ՝ ծանօթ է ամե- նուն : Կայսրը այն առթով պատերազմի դաշտին վերայ զինքը Մարաջախա Փաղղիոյ անուանեց :

— 1867ին Յունուարի 20ին, իբրև պաշտօնեայ պատերազմի յաջորդեր էր Ռանտոն Մարաջախ- տին, և այս գործոյն պաշտօնին մէջ ցցուցած գործունէութիւնը և անձնուրացութիւնը անկա- րելի է որ մոռցուին. անանկ որ կրնայ զուրցուիլ Մարաջախտին համար թէ խրամատին վերայ մեռաւ :

— Մարաջախտն Նիէլ՝ էր անգամ վերին Կա- րոնայի ընդհանուր ժողովոյն : Իրեն շառաւիղ՝ զաւակ մը թողուց, որ արդ աշակերտ է սպայա- կոյտին :